ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Եկեղեցին Հայկական՝ հայրենի տունն է հոգւոյս,
Ինչպէս քարայր մ'ընդարձակ, պարզ ու խորունկ, մութ եւ լոյս,—
Իր գաւիթով հիւրընկալ, իր լայն բեմով, ու հեռուն
Կանգնած իր լուռ խորանով՝ որ կարծես նաւ մ'է ծրփուն...:

Եկեղեցին Հայկական՝ ես աչքս գոց կը տեսնեմ,
Ես կը շնչե՛մ, կը լսե՛մ իր Ցիսուսին մանկադէմ
Ոսքերուն տակ մրխացող քուլայ-քուլայ խունկերով
Եւ իր պատերը ցնցող աղօթքներով ալեխռով...:

Եկեղեցին Հայկական՝ բարձրը բերդն է հաւատքին
Իմ պապերո՛ւս որ հողին զայն քար առ քար հանեցին
Եւ երկինքէն իջուցին զայն ցօղ առ ցօղ, ամպ առ ամպ,
Ու թաղուեցա՛ն անոր մէջ հանդարտութեամբ, քաղցրութեամբ...:

Եկեղեցին Հայկական՝ մեծ վարագոյր մ'է բանուած,
Որուն ետեւ ըսկիզբին մէջ կ'իջնէ ինքը Աստուած,
Որուն առջեւ գլխահակ կու գայ իմ ազգս ամբողջ
Հաղորդըւիլ անցեալին հաց ու գինւով կենսառողջ...: